Հավելված N 1
«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2022-10» ծածկագրով հրավերի

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***

| Ապրանքի** | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը | չ/մ | միավորի գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | |
| | | | | | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | 24451140 | Ախտահանիչ նյութի հաբեր | | Հակամանրէային (ակտիվ նաև միկոբակտերիաների և հատուկ վտանգավոր վարակների հարուցիչների նկատմամբ), հակավիրուսային, հակասնկային ակտիվությամբ օժտված ախտահանիչ միջոց հաբերի տեսքով, որի ազդող նյութը դիքլորիզոցիանաթթվի նատրիումական աղն է: Ակտիվ քլորի պարունակությունը յուրաքանչյուր հաբում՝ նվազագույնը 28%: Սպիտակ հաբեր են՝ 2.5 - 5գ քաշով: Ախտահանիչի աշխատանքային լուծույթի պահպանման ժամկետը՝ նվազագույնը 5 օր: Փաթեթավորումը տուփերով՝ յուրաքանչյուրում 100-ից մինչև 400 հաբ: Պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ի առկայություն մատակարարման պահին: Փաթեթավորումը հերմետիկ, գործարանային՝ հստակ պիտակավորմամբ: Ունենա որակի հավաստագիր (արտադրողի կողմից խմբաքանակին ներկայացվող հավաստագիր), աշխատանքային բնութագրերի ստուգումների համալիր արդյունքներ: Խմբաքանակն ամբողջությամբ լինի միատեսակ (ժամկետի, արտադրողի և փաթեթավորման առումով): ՀՀ ԱՆ նախարարի 10 սեպտեմբերի 2015թ. թիվ 48-Ն հրամանի համաձայն կից մեթոդական ուղեցույցի առկայություն: | հատ | | | 32,000.00 | ք. Երևան, Դ.Մալյան, 37 | Պայմանագրի / Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում |
| 2 | 24451150 | Քլորամին Բ | | Նատրիումի բենզոլսուլֆոքլորամիդ, սպիտակ կամ բաց դեղնավուն բյուրեղային փոշի է քլորի թեթև հոտով, լուծվում է ջրում (1:20) և սպիրտում (1:20), առաջացնելով պղտոր լուծույթ, պարունակում է 25% ակտիվ քլոր, փաթեթավորումը՝ առավելագույնը 1 կգ-ոց փաթեթներով: Նյութի մատակարարման պահին պետք է ապահովվի նյութի մեջ ակտիվ քլորի պարունակությունը առնվազն 23% և պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ի առկայություն: Նյութը պետք է համապատասխանի որակին ներկայացվող միջազգային ստանդարտներին և ունենա որակի հավաստագիր: **Գնորդն իրավունք ունի մատակարարելուց առաջ նյութը լաբորատոր հետազոտման ենթարկելու՝ ակտիվ քլորի պարունակությունը ստուգելու նպատակով:** | կգ | | | 1,500.00 | ք. Երևան, Դ.Մալյան, 37 | Պայմանագրի / Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում |
| 3 | 24451160 | Կալցիումի հիպոքլորիդ (Քլորակիր) | | Սպիտակ կամ բաց մոխրագույն փոշենման զանգված, քլորամինի բնորոշ հոտով, Ա մակնիշի: Քիմիական բանաձևը՝ Ca(ClO)2, քիմիական անվանումը՝ կալցիումի հիպոքլորիդ: Ակտիվ քլորի պարունակությունը 35% և ավելի, ընդհանուր և ազատ քլորի պարունակության տարբերությունը ոչ ավել քան 2%, խոնավությունը ոչ ավել քան 2%: Փաթեթավորումը տուփերով, տուփը կարող է լինել 10-50 կգ: Պահպանման ժամկետը 3 տարի: Պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ի առկայություն մատակարարման պահին: Համապատասխանի որակին ներկայացվող միջազգային ստանդարտներին և / կամ ունենա որակի հավաստագիր: | կգ | | | 500.00 | ք. Երևան, Դ.Մալյան, 37 | Պայմանագրի / Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում |

*** նշված քանակը առավելագույնն է: Ապրանքի բեռնափոխադրումը իրականացվում է գնորդի կողմից ըստ պահանջվող քանակների և ժամկետների:**